ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/157

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Էլա շին» ՍՊԸ-ի տնօրեն Է.Վարդանյանի (պետական ռեգիստրի վկայական՝ թիվ 70.110.1114278),

«Էլա շին» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 17.06.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.06.2021թ. թիվ 26/26-1/9650-2021 գրությամբ «Էլա շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի 08.06.2021թ. թիվ 1-411 գրության հիման վրա, 15.06.2021թ. թիվ 26/26-1/9650-2021 գրությամբ նախաձեռնել է

«Էլա շին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էլա շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էլա շին» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 17.06.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

««Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի և «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝Ընկերություն) միջև 01.02.201թ. կնքվել է «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1» ծածկագրով պայմանագիրը:

1.1. կետի համաձայն՝ «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2.1. կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չնդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

5.1 կետի համաձայն՝ մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

5.2 կետի համաձայն՝ հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 կետի համկաձայն՝ գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 կետի համաձայն՝ եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

Պայմանագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսվել են հետևյալ տեխնիկական պարամետրերը.

անվանումը	Ընդհանուր քանակ
Ցուցանակներ և հարակից առարկաներ	38

«ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ն 29.04.2021թ. մատակարարել է Պայմանագրով նախատեսված ապրանքը, ինչը հաստատվում է 29.04.2021թ. թիվ Բ1164048928 (կցվում է) հաշիվ ապրանքագրով, ուղարկվել է նաև հանձնման-ընդունման ակտ և որևէ դիտողություն կամ որևէ արձանագրություն չի կազմվել ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ:

Որից հետո, 03.06.2021թ. թիվ 1-398 գրությամբ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը հայտնել է «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ին, որ միակողմանի մասնակի լուծում է Պայմանգիրը, նշելով հետևյալը.

«Համաձայն ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Ա. Հովհաննիսյանի զեկուցագրի թվով շտկման կարիք ունի թվով 38 ցուցանակների պարսկերեն լեզվի և բրայլյան համակարգով ներկայացված տեքստերը: 2021թ. հունիսի 02-ի դրությամբ Ձեր կողմից շտկվել է թվով 8 ցուցանակ, իսկ թվով 30-ը դեռևս շտկված չէ: Հաշվի առնելով, որ կազմակերպությունը վերը նշված ցուցակները պայմանագրով թույլատրելի ժամկետում չի շտկել և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի և 8.9 կետը ծանուցում եմ, որ ՊՈԱԿ-ը 2021թ. հունիսի 04-ից միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը:»

Ընկերությունը 07.06.2021թ. դիմել է Պատվիրատուն հայտնելով հետևյալը (կցվում է).

«Ի պատասխան Ձեր 03.06.2021թ. թիվ 1-398 գրության՝ հայտնում եմ, որ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի և «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ի միջև կնքված «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1» ծածկագրով պայմանագրի համաձայն ապրանքների մատակարարման ժամկետը ավարտվում է 2021թ. ապրիլի 29-ին: Նշված ժամկետում վերը նշված ապրանքները մատակարարվել են և տեղադրվել Ձեր ՊՈԱԿ-ի կողմից նշված վայրերում: Եթե առկա են եղել շտկման ենթակա թերություններ, ապա այդ թերությունները շտկվել են պայմանագրի կատարման ժամկետի շրջանակներում»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Գտնում ենք, որ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ն միակողմանի լուծելով «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի և «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 01.02.2021թ. կնքված թիվ «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1» ծածկագրով պայմանագիրը, գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով թե՛ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և թե՛ թիվ «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1» ծածկագրով պայմանագրի դրույթները հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Ինչպես արդեն նշել ենք, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի և «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 01.02.2021թ. կնքվել է թիվ «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1» ծածկագրով պայմանագիրը, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված խողովակների և մետաղներ, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

«ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ն դեռևս 29.04.2021թ. մատակարարել է Պայմանագրով նախատեսված ապրանքը, ինչը հաստատվում է 29.04.2021թ. թիվ Բ1164048928 հաշիվ ապրանքագրով, նաև պատվիրատուին է տրամադրվել հանձնման-ընդունման ակտ և որևէ դիտողություն կամ որևէ արձանագրություն չի կազմվել մատակարարված ապրանքի ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ:

Որից հետո, միայն 03.06.2021թ. թիվ 1-398 գրությամբ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը հայտնել է, որ «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ին, որ միակողմանի մասնակի լուծում է Պայմանագիրը, նշելով հետևյալը.

«Համաձայն ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Ա. Հովհաննիսյանի զեկուցագրի թվով շտկման կարիք ունի թվով 38 ցուցանակների պարսկերեն լեզվի և բրայլյան համակարգով ներկայացված տեքստերը: 2021թ. հունիսի 02-ի դրությամբ Ձեր կողմից շտկվել է թվով 8 ցուցանակ, իսկ թվով 30-ը դեռևս շտկված չէ: Հաշվի առնելով, որ կազմակերպությունը վերը նշված ցուցակները պայմանագրով թույլատրելի ժանկետում չի շտկել և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի և 8.9 կետը ծանուցում եմ, որ ՊՈԱԿ-ը 2021թ. հունիսի 04-ից միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը»:

Վերը նշվածի կապակցությամբ, Ընկերությունը 07.06.2021թ. դիմել է Պատվիրատուն հայտնելով հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 03.06.2021թ. թիվ 1-398 գրության՝ հայտնում եմ, որ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի

պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի և «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ի միջև կնքված «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1» ծածկագրով պայմանագրի համաձայն ապրանքների մատակարարման ժամկետը ավարտվում է 2021թ. Ապրիլի 29-ին: Նշված ժամկետում վերը նշված ապրանքները մատակարարվել են և տեղադրվել Ձեր ՊՈԱԿ-ի կողմից նշված վայրերում: Եթե առկա են եղել շտկման ենթակա թերություններ, ապա այդ թերությունները շտկվել են պայմանագրի կատարման ժամկետի շրջանակներում»:

Գտնում ենք, որ Պայմանագիրը լուծելիս՝ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ն թույլ է տվել մի շարք խախտումներ, մասնավորապես.

Նախ, Պատվիրատուի կողմից միակողմանի մասնակի լուծվել է «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1» ծածկագրով պայմանագիրը, ինչը սահմանված կարգով և ժամկետներում պատշաճ կատարվել է Ընկերության կողմից՝ ամբողջ ծավալով:

Ինչ վերաբերվում է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի 03.06.2021թ. թիվ 1-398 գրությամբ նշված այն փաստին, որի համաձայն ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Ա. Հովհաննիսյանի զեկուցագրի թվով շտկման կարիք ունի թվով 38 ցուցանակների պարսկերեն լեզվի և բրայլյան համակարգով ներկայացված տեքստերը: 2021թ. հունիսի 02-ի դրությամբ Ընկերության կողմից շտկվել է թվով 8 ցուցանակ, իսկ թվով 30-ը դեռևս շտկված չէ, ապա բողոքներ քննող անձին հայտնում ենք, որ վերոհիշյալը անհիմն է և իրականությանը չի համապատասխանում:

Ինչպես նաև ևս մեկ անգամ ցանկանում ենք նշել, որ «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ն դեռևս 29.04.2021թ. մատակարարել է Պայմանագրով նախատեսված ապրանքը, ինչը հաստատվում է 29.04.2021թ. թիվ Բ1164048928 հաշիվ ապրանքագրով, պայմանագրով սահմանված կարգով Պատվիրատուին է ներկայացվել ուղարկվել է նաև հանձնման-ընդունման ակտը և արձանագրությունը և որևէ դիտողություն կամ որևէ արձանագրություն չի կազմվել ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ:

Մասնավորապես, Պայմանագրի 5.1 կետի համաձայն՝ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3), ինչը «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ն 29.04.2021թ. կատարել է՝ հանձնելով նշված փաստաթղթերը պատվիրատուին՝ մատակարարված ապրանքի հետ մեկտեղ:

Պայմանագրի 5.2 կետի համաձայն՝ հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Պայմանագրի 5.3 կետի համաձայն՝ գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

Պայմանագրի 5.4 կետի համաձայն՝ եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

Մինչդեռ, Պատվիրատուն, խախտելով Պայմանագրի 5.2 և 5.3. կետի պահանջները, ոչ ստորագրել է ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հանձնման-ընդունման արձանագրությունը, ոչ էլ դիտողություններով հետ ուղարկել Ընկերությանը՝ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժմամբ:

Սակայն նույն Պայմանագրի 5.4 կետը իմպերատիվ սահմանում է, որ եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում (10 աշխատանքային օրվա ընթացքում) Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նաև նկատի ունենալ, որ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը նաև պայմանագիրը լուծել է սխալ իրավական հիմքով: Մասնավորապես,

պայմանագիրը միակողմանի լուծման գրության մեջ մատնանշվել է, որ 2021թ. հունիսի 2-ի դրությամբ ՍՊԸ-ի կողմից շտկվել է թվով 8 ցուցանակ, իսկ թվով 30-ը դեռևս շտկված չէ, և հաշվի առնելով, որ կազմակերպությունը վերը նշված ցուցակները պայմանագրով թույլատրելի ժանկետում չի շտկել, ՊՈԱԿ-ը հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1-րդ կետի բ) ենթակետը՝ միակողմանի լուծել է պայմանագիրը: Մինչդեռ ակնհայտ է, որ գրությամբ խոսվում է մատակարարված իբրև թե անպատշաճ որակի ապրանքի մասին, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, սակայն վկայակոչվել է Պայմանագրով նախատեսված լուծման այն հիմքը, որ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի, ինչի չի համապատասխանում իրականությանը, քանի որ 2021թ. ապրիլի 29ժի դրությամբ ողջ ապրանքը եղել է մատակարարված:

Արդյունքում, նման ոչ իրավաչափ և իրականությանը չհամապատասխանող պայմաններում «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ն միակողմանի մասնակի լուծել է իր և «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ի միջև 01.02.2021թ. կնքված թիվ «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1» ծածկագրով պայմանագիրը:

Ի մի բերելով վերը նշված փաստերն ու փաստական հանգամանքները՝ գտնում ենք, որ «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ի կողմից թույլ չի տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրային պարտավորության որևէ խախտում, ուստի և առկա չեն «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ն դատական կարգով վիճարկել է «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիրը միակողմանի լուծելը (քաղ. գործ թիվ ԵԴ/26295/02/21)»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է իրեն չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության խախտում և չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/157 ընթացակարգի շրջանակներում քննության նպատակով 21.06.2021թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր և ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր իրենց հերթին պնդել են վերը շարադրված դիրքորոշումը:

3. «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.06.2021թ. թիվ 1-411 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի /այսուհետ՝ ՊՈԱԿ/ և «Էլա շին» ՍՊԸ-ի /այսուհետ՝ կազմակերպություն/ միջև 2021 թվականի փետրվարի 01-ին կնքված թիվ ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1 ծածկագրով պայմանագրի 1.1 կետի համաձայն կազմակերպությունը պարտավորվել է ՊՈԱԿ-ին մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով, նախատեսված ցուցանակներ /այսուհետ՝ ապրանքներ/: Պայմանագրի թիվ 1 հավելվածի համաձայն ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրը: Պայմանագիրն ուժի մեջ է մտել 2021 թվականի մարտի 30-ին:

Կազմակերպության կողմից վերը նշված ցուցանակները պայմանագրով սահմանված ժամկետում ամբողջությամբ չեն մատակարարել ՊՈԱԿ-ին: Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը և 8.9 կետը ՊՈԱԿ-ը 2021 թվականի հունիսի 4-ից միակողմանի մասնակի լուծել է պայմանագիրը:

Կազմակերպությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ներկայացվում են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/157 ընթացակարգի շրջանակներում 21.06.2021թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/157 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/157 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի և «Էլա շին» ՍՊԸ-ի միջև 01.02.2021թ. կնքվել է «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:
2. Պայմանագրին կից հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ «ցուցանակներ և հարակից առարկաներ» ապրանքի մատակարարումը պետք է իրականացվի պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:
3. Պայմանագրի 8.13-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով...:
4. Կողմերի միջև Պայմանագրի շրջանակներում 30.03.2021թ. կնքվել է 01.02.2021թ. կնքված N ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1 «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիրը, որի համաձայն նախատեսվել են ֆինանսական միջոցներ:
5. «Էլա շին» ՍՊԸ-ին ուղղված 03.06.2021թ. թիվ 1-398 ծանուցմամբ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի

պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի /այուհետ՝ ՊՈԱԿ/ և «Էլա շին» ՍՊԸ-ի /այսուհետ՝ կազմակերպություն/ միջև 2021 թվականի փետրվարի 01-ին կնքված թիվ ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1 ծածկագրով պայմանագրի /այսուհետ՝ պայմանագիր/ 1.1 կետի համաձայն կազմակերպությունը պարտավորվել է ՊՈԱԿ-ին մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ցուցանակներ /այսուհետ՝ ապրանքներ/: Պայմանագրի թիվ 1 հավելվածի համաձայն ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրը: Պայմանագիրն ուժի մեջ է մտել 2021 թվականի մարտի 30-ին:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի: Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Համաձայն ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Ա. Հովհաննիսյանի զեկուցագրի շտկման կարիք ունի թվով 38 ցուցանակների պարսկերեն լեզվի և բրայլյան համակարգով ներկայացված տեքստերը: 2021 թվականի հունիսի 02-ի դրությամբ Ձեր կողմից շտկվել է թվով 8 ցուցանակ, իսկ թվով 30-ը դեռևս շտկված չէ:

Հաշվի առնելով, որ կազմակերպությունը վերը նշված ցուցանակները պայմանագրով թույլատրելի ժամկետում չի շտկել և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը և 8.9 կետը ծանուցում եմ, որ ՊՈԱԿ-ը 2021 թվականի հունիսի 04-ից միակողմանի լուծում է պայմանագիրը»:

6. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում 03.06.2021թ հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.06.2021թ. թիվ 26/26-1/9650-2021 գրությունը, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի 08.06.2021թ. թիվ 1-411 գրությունը և կից փաստաթղթերը, Ընկերության ներկայացրած առարկությունները և կից փաստաթղթերը, ինչպես նաև գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար ***<u>պատասխանատու է մեղքի առկայության դեպքում</u>***, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Պայմանագրի 2.1.7 ենթակետի համաձայն՝ ***<u>Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը</u>***, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Այսպես, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի և «Էլա շին» ՍՊԸ-ի միջև 01.02.2021թ. կնքվել է «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1» ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ «ցուցանակներ և հարակից առարկաներ» ապրանքի մատակարարումը պետք է իրականացվի պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրի 8.13-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով...:

Կողմերի միջև Պայմանագրի շրջանակներում 30.03.2021թ. կնքվել է 01.02.2021թ. կնքված N ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1 «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» պայմանագրում փոփոխություն կատարելու մասին համաձայնագիրը, որի համաձայն նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Համաձայն պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ N 1 ակտի՝ արձանագրվել է, որ Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի և «Էլա շին» ՍՊԸ-ի միջև 01.02.2021թ. կնքված թիվ «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1» գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 29.04.2021թ. հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնել է հետևյալ աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը
Մշակված քարի հիմքի մետաղյա ցուցանակի պատրաստում՝ լազերային փորագրությամբ և QR կոդավորմամբ	38	հատ

Այնուհետև՝ 30.04.2021թ., Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից կազմվել է պայմանագրի կատարման վերաբերյալ N 1 եզրակացությունը հետևյալ բովանդակությամբ.

«Մատակարարված ապրանքները չեն համապատասխանում պայմանագրի տեխնիկական բնութագրին, մասնավորապես 38 ցուցանակներում թերի են հնգալեզու բրայլյան համակարգի տեքստերը: Առկա են թերություններ նաև պարսկերեն գրառումներում:

<u>Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ բացասական եզրակացություն»:</u>

Պատվիրատուի կողմից ՀՀ ԿԳՄՍ նախարարություն Պահպանության ծառայություն ՊՈԱԿ/ Armenian monuments ինտերնետային կայքում 05.05.2021թ. հրապարկվել է հոդված հետևյալ բովանդակությամբ.

«(…)

«***<u>Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը հանրապետության չորս՝ Արարատի, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերի թվով 38 հուշարձանների տարածքներում արդեն տեղադրել է տեղեկատվական ցուցանակներ:</u>*** Հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն, պարսկերեն, անգլերեն լեզուներով նշված են հուշարձանների անվանումները: Համառոտ տեղեկության հնարավոր է ծանոթանալ նաև բրայլյան համակարգով /հինգ լեզուներով/:

Առավել մանրամասն ինֆորմացիա տվյալ հուշարձանի մասին այցելուները կարող են իմանալ ցուցանակի վրա նշված QR կոդի միջոցով»:

02.06.2021թ. Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից կազմվել է պայմանագրի կատարման վերաբերյալ N 2 եզրակացությունը հետևյալ բովանդակությամբ.

«Թվով 38 ցուցանակներում տեղ գտած անհամապատասխանությունները, Վաճառողի կողմից շտկվել են թվով 8 ցուցանակներում:

Հիմք ընդունելով վերոգրյալը, թվով 8 ցուցանակների համար տալիս եմ դրական եզրակացություն:

Միաժամանակ համաձայն պայմանագրի 6.3 կետի անհրաժեշտ է կիրառել տուգանք 0.5 տոկոսի չափով, որը կազմում է 84 930 ՀՀ դրամ»:

«Էլա շին» ՍՊԸ-ին ուղղված 03.06.2021թ. թիվ 1-398 ծանուցմամբ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ, որ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի /այուհետ՝ ՊՈԱԿ/ և «Էլա շին» ՍՊԸ-ի /այսուհետ՝ կազմակերպություն/ միջև 2021 թվականի փետրվարի 01-ին կնքված թիվ ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1 ծածկագրով պայմանագրի /այսուհետ՝ պայմանագիր/ 1.1 կետի համաձայն կազմակերպությունը պարտավորվել է ՊՈԱԿ-ին մատակարարել պայմանագրի թիվ 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ցուցանակներ /այսուհետ՝ ապրանքներ/: Պայմանագրի թիվ 1 հավելվածի համաձայն

ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրը: Պայմանագիրն ուժի մեջ է մտել 2021 թվականի մարտի 30-ին:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի: Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Համաձայն ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Ա.Հովհաննիսյանի զեկուցագրի շտկման կարիք ունի թվով 38 ցուցանակների պարսկերեն լեզվի և բրայլյան համակարգով ներկայացված տեքստերը: 2021 թվականի հունիսի 02-ի դրությամբ Ձեր կողմից շտկվել է թվով 8 ցուցանակ, իսկ թվով 30-ը դեռևս շտկված չէ:

Հաշվի առնելով, որ կազմակերպությունը վերը նշված ցուցանակները պայմանագրով թույլատրելի ժամկետում չի շտկել և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը և 8.9 կետը ծանուցում եմ, որ ՊՈԱԿ-ը 2021 թվականի հունիսի 04-ից միակողմանի լուծում է պայմանագիրը»:

Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 108-րդ կետի համաձայն՝ Պայմանագրի կատարման նկատմամբ նախնական հսկողությունն իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը: ***Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ,*** որի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը:

Կարգի 109-րդ կետի համաձայն՝ արձանագրությունն ստորագրվում է, եթե առկա է պատասխանատու ստորաբաժանման գնման հայտը նախագծած ներկայացուցչի

(ներկայացուցիչների) գրավոր դրական եզրակացությունը: Սույն կետում նշված անձը պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ տալիս է դրական եզրակացություն, եթե մատակարարված ապրանքը, կատարված աշխատանքը կամ մատուցված ծառայությունը համապատասխանում են պայմանագրի պայմաններին: Պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման կամ ծառայության մատուցման ժամկետների խախտման դեպքերում տրվում է դրական եզրակացություն, եթե պատվիրատուի կողմից չի ընդունվում պայմանագիրը լուծելու մասին որոշում: ***<u>Բացասական եզրակացություն տալու դեպքում պատասխանատու ստորաբաժանումը երկու աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին գրավոր հայտնում է պատվիրատուի ղեկավարին՝ ներկայացնելով առաջարկություններ պայմանագրի կողմի նկատմամբ ձեռնարկվելիք միջոցների վերաբերյալ</u>***: Նման դեպքում պատվիրատուի ղեկավարը ներկայացված առաջարկություններին համապատասխան ձեռնարկում է միջոցներ՝ հարցի կարգավորման համար: ՀՀ պաշտպանության նախարարության պատվերներով իրականացվող տեղական արտադրության ռազմական նշանակության ապրանքի և (կամ) գույքի համար, որոնց ընդունումը (նախատեսված է) իրականացվել է պատվիրատուի ներկայացուցչության միջոցով, արձանագրության ստորագրման համար հիմք է ընդունվում ներկայացուցչության կողմից այդ ապրանքի և (կամ) գույքի համար տրված դրական եզրակացությունը:

Պայմանագրի 5.2, 5.3 և 5.4 կետերի համաձայն՝

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 ***<u>Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում</u>*** իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ***<u>ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը</u>***:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

Այսպիսով, վերը շարադրված կարգավորումների համաձայն, Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի և գնման պայմանագիր կնքած անձի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, ընդ որում սահմանված է հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու կամ ապրանքը չընդունելու առավելագույն ժամկետ, այն է՝ հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օր, իսկ սահմանված ժամկետի չպահպանման դեպքում մատակարարված ապրանքը համարվում է ընդունված:

Այսինքն՝ 29.04.2021թ. մատակարարված ապրանքների «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից չընդունելու դեպքում վերոնշված ժամկետում պետք է «Էլա շին» ՍՊԸ-ին ներկայացվեր ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը, որի պայմաններում միայն հնարավոր կլիներ քննության առնել, Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն, Գնորդի իրավունքի պատշաճ իրացման արդյունքում Պայմանագրի միակողմանի մասնակի լուծման հիմքի իրավաչափության հարցը, քանի որ Պայմանագիրը, համաձայն Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցման, լուծվել է Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի՝ ապրանքի մատակարարման ժամկետները 30 օրից ավելի խախտելու հիմքով, սակայն, գործում առկա նյութերի համաձայն, ապրանքները 29.04.2021թ. մատակարարվել են:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 23.06.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/10285-2021 գրությամբ դիմել է Պատվիրատուին և ***<u>խնդրել սեղմ ժամկետում տրամադրել «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից 01.02.2021թ կնքված թիվ «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1» պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների վերաբերյալ բացասական եզրակացությունը «Էլա շին» ՍՊԸ-ին տրամադրելու փաստը հավաստող ապացույցը:</u>***

Ի պատասխան նշված գրության՝ Պատվիրատուն 24.06.2021թ. թիվ 1-475 գրությամբ հայտնել է, որ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի և «Էլա շին» ՍՊԸ-ի միջև ***01.02.2021թ. կնքված թիվ «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1» պայմանագրի կատարման վերաբերյալ թիվ 1 բացասական եզրակացության մասին պատասխանատու ստորաբաժանման ղեկավար հանդիսացող, ՊՈԱԿ-ի փոխտնօրեն Ա. Հովհաննիսյանի կողմից կազմակերպությունը տեղեկացվել է բանավոր:***

Միևնույն ժամանակ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 23.06.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/2/10285-2021 գրությամբ խնդրել է հայտնել՝ արդյոք ՀՀ ԿԳՄՍ նախարարություն պահպանության ծառայություն ՊՈԱԿ-ի կողմից 05.05.2021թ. հրապարակված հոդվածն առ այն, որ «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը հանրապետության չորս՝ Արարատի, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց ձորի մարզերի թվով 38 հուշարձանների տարածքներում արդեն տեղադրել է տեղեկատվական ցուցանակներ, վերաբերելի է 01.02.2021թ կնքված թիվ «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1» պայմանագրի շրջանակներում մատակարարվելիք ցուցանակներին, որի ի պատասխան 24.06.2021թ. թիվ 1-475 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, ***որ այո, ՊՈԱԿ-ի կողմից 2021 թվականի մայիսի 05-ին հրապարակված հոդվածն առ այն, որ «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը հանրապետության չորս՝ Արարատի, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերի թվով 38 հուշարձանների տարածքներում արդեն տեղադրել է տեղեկատվական ցուցանակներ, վերաբերելի է 01.02.2021թ կնքված թիվ «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1» պայմանագրի շրջանակներում մատակարարվելիք ցուցանակներին:***

Այսպիսով՝ Պատվիրատուի 24.06.2021թ. թիվ 1-475 գրության և գործում առկա փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում, արձանագրում եմ, որ Պատվիրատուի կողմից կազմված ***01.02.2021թ. կնքված թիվ «ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1» պայմանագրի կատարման վերաբերյալ թիվ 1 բացասական եզրակացությունը սահմանված ժամկետում չի տրամադրվել «Էլա շին» ՍՊԸ-ին, քանի որ Պատվիրատուն գրությամբ ևս հայտնել է, որ ՊՈԱԿ-ի փոխտնօրեն Ա. Հովհաննիսյանի կողմից կազմակերպությունը տեղեկացվել է բանավոր, որպիսի ընթացակարգ վերը շարադրված իրավակարգավորումներով նախատեսված չէ:***

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում անդրադառնալ Պատվիրատուի գործողություններին, այն է՝ 30.04.2021թ., Պատվիրատուի գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից կազմված պայմանագրի կատարման վերաբերյալ N 1 բացասական

եզրակացության առկայության պայմաններում, Պատվիրատուի կողմից ՀՀ ԿԳՄՍ նախարարություն Պահպանության ծառայություն ՊՈԱԿ/ Armenian monuments կայքում 05.05.2021թ. հրապարկված հոդվածն առ այն, որ «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը հանրապետության չորս՝ Արարատի, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերի թվով 38 հուշարձանների տարածքներում արդեն տեղադրել է տեղեկատվական ցուցանակներ, ***ինչն արդեն հերքում է «Էլա շին» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի խախտման փաստը:***

Ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ արձանագրում եմ, որ Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու՝ Պատվիրատուի իրականացրած գործողություններն իրավաչափ չեն, հետևաբար գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը նման պայմաններում չի կարող վրա հասնել և հանգեցնել Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.06.2021թ. թիվ 26/26-1/9650-2021 գրությամբ «Էլա շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**